ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍՄԱՐԹԷԼ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/159 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	Սարքին ներկայացվող նվազագույն պահանջներն են՝ ցենտրիֆուգը կոմպակտ սեղանադիր լաբորատոր սարք է, նախատեսված արյան, շիճուկի, պլազմայի և այլ կենսաբանական նմուշների տարանջատման համար, հագեցած միկրոպրոցեսորային կառավարման համակարգով և թվային, հստակ ընթեռնելի էկրանով, արագության կարգավորման հնարավորությամբ ինչպես RPM, այնպես էլ RCF միավորներով, կարգավորվող ժամանակաչափով, սպասարկում չպահանջող և ցածր աղմուկ ապահովող brushless DC շարժիչով, «Quick Spin» կարճատև արագ պտտման ֆունկցիայով (Pulse կոճակի միջոցով), էլեկտրական փականով կափարիչով և աշխատանքի ավարտից հետո ավտոմատ ապաբլոկավորման համակարգով, ինչպես նաև անհավասարակշռության, գերբեռնվածության և անվտանգ կանգի պաշտպանական մեխանիզմներով՝ ապահովելով հուսալի, անվտանգ և արդյունավետ աշխատանք կլինիկական, անասնաբուժական և հետազոտական լաբորատոր կիրառություններում: Լրացուցիչ պահանջներ. Սարքը պետք է համալրված լինի աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր աքսեսուարներով, միացման լարերով, ներառյալ փաստաթղթերը: Սարքը մատակարարել գործարանային փաթեթավորմամբ: Սարքը տեղադրելուց հետո սարքը պետք է բերվի աշխատանքային վիճակի: Երաշխիքային ժամկետը՝ Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրացուցային օրը: Սարքի երաշխիքային սպասարկումը՝ տեղում (Պատվիրատուի հասցեում), իսկ դրա անհնարինության դեպքում տեղափոխում սպասարկման կետ, հաշվի առնելով որ տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը իրականացվելու են Վաճառողի կողմից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Смартэл ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЪՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/159 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	